

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի երկրորդ եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2020 թվականին երկրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 2798 թղթակցություն, առաքվել՝ 1914 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Ազգային ժողովից՝ 6, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 173, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 293, Հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 313, մարդու իրավունքների պաշտպանից՝ 1, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 632, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 931, գաղտնի թղթակցություն՝ 13, քաղաքացիներից՝ 436 դիմում: ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 94 դիմում, որից՝ ՀՀ Ազգային ժողովից՝ 3, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 69, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 14, հանրապետական գործադիր մարմիններից՝ 8 դիմում:

2020թ. երկրորդ եռամսյակում մարզպետի մոտ ընդունելություն չի կազմակերպվել՝ պայմանավորված համաճարակի պատճառով ստեղծված իրավիճակից:

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: